ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԴԱՍՎԱՐ

ԹԵՄԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐ

Կազմեց՝ Լուսինե Ավանեսյան Ռաֆիկի
(անուն, ազգանուն, հայրանուն)

<<Ա. Հայրապետյանի անվան N 6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ
(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ
(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……...……..3

ԳԼՈՒԽ 1. ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ….....5

1.1 Փոխգործուն մեթոդների կիրառումը մայրենիի դասերին…….……12

1.2 Գործնական մաս<<Մութի և լույսի ծնունդը>>թեմայի օրվա պլան 3 օր……12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……..16

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ…….....17

ՀԱՎԵԼՎԱԾ…….…….18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակի անընդմեջ փոփոխությունների պայմաններում կրթության գլխավոր խնդիրներից է շարունակում մնալ մարդկային բարձր արժանիքներով օժտված անհատի ձևավորումը, որին մեծապես կարող են օժանդակել մայրենիի ուղղորդված դասագործընթացները:

Դասավանդման և ուսուցման նորարարական մեթոդները վերափոխում են նաև դասարանում դաս անցկացնելու գործելակերպը: Ավելին, տեխնոլոգիաները նոր պահանջներ են ներկայացնում. հիմնական կարողություններից, հմտություններից բացի, նրանք պետք է ունենան 21–րդ դարում պահանջվող համագործակցության, հաղորդակցման և տեղեկատվական կառավարման կարողություններ:

Կլինի՞ արդյոք ուսումը կրտսեր դպրոցականների համար գրավիչ, կստիպի՞ մտածել, քննադատորեն վերաիմաստավորել: Այս ամենը և շատ այլ բաներ պայմանավորված են նրանով, թե դասի ժամանակ ինչ մեթոդներ և մեթոդական հնարներ կկիրառվեն, ինչ պայմաններ կստեղծվեն երեխաների համար:

Ուսուցման ժամանակակից մեթոդների հիմքում սովորողի ինքնուրույնությունն է, նրա անմիջական մասնակցությունը այդ գործընթացին:

Ուսումնասիրության թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այսօր էլ մայրենիի դասագործընթացում կարևորագույն և անփոխարինելի դեր կարող են կատարել ժամանակակից փոխգործուն մեթոդներն ու մեթոդական հնարները, որոնց ճիշտ և նպատակային կիրառումը դասի տարբեր փուլերում կնպաստի կրտսեր դպրոցականների հոգեբանության, բնավորության գծերի, արժեքային համակարգի ձևավորմանը:

Ուսումնասիրության նպատակն է մայրենիի դասագործընթացում, կիրառելով տարատեսակ փոխգործուն մեթոդներ, առանձնացնել և մշակել ԽԻԿ համակարգի

տարբեր փուլերում կիրառվող արդյունավետ մեթոդների համալիր:

Ուսումնասիրության խնդիրները: Մեր ուսումնասիրության նպատակին հասնելու համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները՝

1. ուսումնասիրել հետազոտության թեմային առնչվող մասնագիտական առկա գրականություն և վերլուծել արդյունքները,
2. բացահայտել ժամանակակից մեթոդների առանձնահատկությունները,
3. առանձնացնել և մայրենիի դասագործընթացում փորձարկել մի քանի փոխգործուն մեթոդներ,
4. համակարգել մի շարք փոխգործուն մեթոդներ ԽԻԿ համակարգի տարբեր փուլերում:

Աշխատանքի նորույթը. տարրական դպրոցում մայրենիի դասագործընթացում փոխգործուն մեթոդների կիրառմամբ առանձնացնել և մշակել ենք ԽԻԿ համակարգի տարբեր փուլերում կիրառվող արդյունավետ մեթոդների համալիր:

Հետազոտության մեթոդները

Օգտագործվել են մանկավարժական-հետազոտական, տեսական և փորձարարական մեթոդներ. գրականություն, գործնական մեթոդներ, խաղային տեխնոլոգիաներ, ցուցադրական – զննական, համագործակցային, նախագծային մեթոդներ:

Հետազոտության կառուցվածքը

Կազմված է ներածությունից, 1 գլխից, դասի պլանից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային բովանդակության 21էջ:

ԳԼՈՒԽ 1. ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդ ինտերակտիվ («Inter» - փոխադարձ, «act»- գործել), նշանակում է փոխներգործել, գտնվել ինչ-որ մեկի հետ երկխոսության մեջ: Այլ կերպ ասած՝ եթե ավանդական մեթոդների դեպքում փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում սովորողները և դասավանդողը, ապա ինտերակտիվ մեթոդների դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ, և ուսուցման ընթացքում գերակայում է սովորողների դերը:[1]

Առհասարակ ուսուցման մեթոդը ուսուցչի և աշակերտների փոխգործակցության եղանակն է, այն ուղղված է ուսուցման խնդիրների լուծմանը: Որոշ մտածողներ կարծում են, որ ուսուցման մեթոդը սովորողների ուսումնաճանաչողական գործունեության կազմակերպման եղանակն է:

Նրանց կարծիքով ուսուցչի խնդիրը սովորողներին ուսուցման գործընթաց ներգրավելն է, նրանց ակտիվ մասնակցության ապահովումը և ուսումնական գործունեության կազմակերպմանն աջակցելը: «Մանկավարժական պրակտիկայում մեթոդն ավանդաբար ընդունված է հասկանալ որպես ուսումնադաստիարակչական նպատակներին հասնելու գործունեության կարգավորված ձև»:

«Մանկավարժության մեջ մեթոդը հասկացվում է մի կողմից որպես ուսուցչի, իսկ մյուս կողմից՝ որպես աշակերտի գործունեության եղանակ:

Այլ կերպ ասած՝ մեթոդը փոխազդեցության, փոխգործողության եղանակ է. ուսուցչի և աշակերտի աշխատանքի առանձնահատկությունների արտահայտությունն ուսուցման գործընթացում»:

Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողն առաջատար դերում չէ; Նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է:

[1] Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Ուսումնական ձեռ- նարկ, Ե., 2005:

Սխեմա 3, Ինտերակտիվ մեթոդ

Փոխներգործուն մեթոդներ կիրառող ուսուցիչը հանդես է գալիս միջնորդի, վերահսկողի, կազմակերպողի, ուսուցանողի դերում: Նա պետք է միջնորդ հանդիսանա երեխայի և ուսուցանվող առարկայի կամ նյութի միջև, ուշադիր հետևի երեխային և անհրաժեշտ պահին օգնություն ցույց տա, շտկումներ անի, դասարանում ստեղծի բարենպաստ միջավայր և ուշադիր դիտարկի երեխայի վարքը, գնահատի հոգեկան և ֆիզիկական զարգացումը, հետևի, որ երեխաները իրար չխանգարեն: Ինտերակտիվ մեթոդները կիրառելիս ուսուցիչները պետք է հիշեն.[2]

- Բոլոր սովորողները պետք է այս կամ այն կերպ ներգրավված լինեն աշխատանքում:
- Հաշվի առնել սովորողների հոգեբանական վիճակը:
- Ցանկալի չէ սովորողների մեծաքանակ խումբը:
- Դասարանը պատրաստել աշխատանքն սկսելուն:
- Ուշադրություն դարձնել ժամանակին:
- Փոքր խմբերի ճիշտ բաժանում կատարել:

Կրթության բովանդակությունը (ի՞նչ սովորեցնել) մատուցելու և կրթության նպատակներ (ինչո՞ւ սովորեցնել) իրականացնելու համար այսպիսով անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ, ձևեր: Հանդիսանալով ուսուցման գործընթացի միջուկը՝ մեթոդը իրար է կապում ուսուցման՝ նախապես պլանավորած նպատակը և վերջնական արդյունքը: Ուսուցման գործընթացում մեթոդն ունի կապող օղակի բարդ և առանձնահատուկ դեր: Ուսուցման մեթոդը բարդ և բազմակողմանի հասկացությու է: Առաջին հերթին դա պայմանավորված է հենց ուսուցման գործընթացի բարդությամբ: Վերջինս իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիր՝

1. Ի՞նչ սովորեցնել (կրթության բովանդակություն),
2. Ինչո՞ւ, ինչի՞ համար սովորեցնել (կրթության նպատակներ),

[2] Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Ուսումնական ձեռ- նարկ, Ե., 2005:

3. Ինչպե՞ս սովորեցնել (ուսուցման մեթոդիկա):

Յուրաքանչյուր ուսուցիչ ամեն մի դասից առաջ կանգնում է մի քանի կարևոր խնդիրների առջև.

- Ինչպե՞ս հաջող պլանավորել դասը,
- Ինչպե՞ս հաջող իրականացնել դասը,
- Ինչպե՞ս կանխատեսել արդյունքները,
- Ինչպե՞ս հասնել նպատակներին,
- Ինչպե՞ս վերլուծել հաջողություններն ու բացթողումները:

Այս խնդիրների իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է ուսուցման բազմազան մեթոդների լավ իմացություն: Գիտական գրականության մեջ մեթոդն ունի բազմաթիվ սահմանումներ: Ներկայացնենք դրանցից մի քանիսը. «Ուսուցման մեթոդը ուսուցման այնպիսի ձև է, որը կիրառվում է պարբերաբար և մեծ ազդեցություն թողնում մանկավարժական աշխատանքի ամբողջական ուղղվածության վրա»: «Ուսուցման մեթոդը ուսուցչի և աշակերտի հետևողական, փոխկապակցված գործողությունների համակարգն է, որն ապահովում է կրթության բովանդակության յուրացումը»:

Ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար, ինչպես նկատեցինք, ուսուցչին անհրաժեշտ է տարբեր մեթոդների իմացություն: Սակայն սոսկ իմացու թյունը բավարար չէ արդյունավետ ուսուցում իրականացնելու համար: Այստեղ չափազանց կարևորվում է ուսուցման նպատակներից ու կանխատեսված արդյունքներից բխող մեթոդների ճիշտ ընտրության և կիրառության կարողություն. «Թերևս այդ ուղիով կարելի է գտնել աշակերտի՝ «ինչպե՞ս սովորեմ, չեմ կարողանում սովորել» հաճախ բարձրաձայնվող հարցի պատասխանը»:[3]

Փոխներգործուն /ինտերակտիվ/ մեթոդի առանձնահատկություններն են.

- աշակերտը նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի
- աշակերտը հենվում է ոչ այնքան իր հիշողության, որքան ինքնուրույն,

[3] Ասատրյան Լ., Հակոբյան Գ., Ասատրյան Մ., Գևորգյան Մ., Կարապետյան Ն. Արմինե Բաղդասարյան, Մանկավարժություն, Ե,, 2017:

ստեղծագործական, քննադատական մտածողության վրա,

- աշակերտի համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար,
- աշակերտը ձեռք է բերում համագործակցային կարողություններ, սոցիալական փոխազդեցության, հաղորդակցական կարողություններ,
- նյութի յուրացման ընթացքում աշակերտը հնարավորություն է ստանում ի մի բերել, ամփոփել, ակտիվացնել և կիրառել սովորածը,
- ստեղծվում է ինքնակրթության միջավայր:

ԽԻԿ-ը ժամանակակից ուսուցման մեթոդների համակարգ է, որը ուսուցման գործընթացը բաժանում է հետևյալ փուլերի՝ խթանում, իմաստի ընկալում, կշռադատում: Բնութագրելով յուրաքանչյուր փուլում ուսուցչի անելիքը՝ ԽԻԿ-ը նաև առաջ է քաշում մի շարք մեթոդներ՝ տվյալ փուլին անհրաժեշտ արդյունքին հասնելու համար:

- Խթանման փուլի հիմնական նպատակներից են՝ նոր նյութի վերաբերյալ սովորողների գիտելիքների բացահայտում, քննարկվելիք նյութի մեջ աշակերտների ներգրավում, աշակերտների մեջ գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտման ձևավորում:
- Իմաստի ընկալման փուլի նպատակներից են սովորողների հետաքրքրության աճի պահպանումը, տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահո- վումը, նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը
- Կշռադատման փուլի նպատակներից են՝ սովորողը նոր ստացած տեղեկատվու- թյունը կարողանա արտահայտել իր բառերով և ձևակերպումներով, նոր գիտելիքների միաձուլում ունեցածին և դրանց աստիճանական ինտեգրում:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել դասի խթանման փուլում.

- Մտագրոհ
- Խմբավորում
- Պրիզմա
- Մտածի՛ր, զո՛ւյգ կազմիր, քննարկի՛ր
- Գուս /գիտեմ,ուզում եմ սովորել, սովորել եմ/
- Դերայի խաղ

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել դասի իմաստի ընկալման փուլում

- T-աձև աղյուսակ
- Գաղափարների /հասկացությունների/ քարտեզագրում
- Վենի դիագրամ
- Փոխներգործուն նշանների համակարգ
- Բանավեճ
- Զրույց
- Համառոտ դասախոսություն
- Խորանարդում
- Խճանկար
- Շրջագայություն պատկերասրահում
- Երեք բանալի և մեկ կողպեք
- Կարուսել
- Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել դասի կշռադատման փուլում.
- Քառաբաժան
- Ձնագնդի
- Գնահատման անիվ
- Իրավիճակների վերլուծության մեթոդ

Ուղեղային (մտային) գրոհ կամ մտքերի տարափ (բրեյնստորմինգ)

Մեթոդների կամ մեթոդական հնարների իմացությունը և կիրառումը, սակայն, չի կարող ինքնանպատակ լինել:

Այսինքն՝ բուն նպատակը ոչ թե պարզապես դասն աշխուժացնելն է կամ դասի ընթացքում գործընկերների առջև մանկավարժական վարպետությամբ փայլելը, այլ առաջին հերթին՝ մեթոդական ողջ զինանոցի կիրառմամբ հասնել ուսուցման նպատակների իրականացման:

Եթե մեր կողմից կիրառված մեթոդները չեն տանում դեպի այդ նպատակը, ուրեմն պետք է փոխել կամ կատարելագործել դրանք: Եթե մեթոդները արդյունավետ են, բայց դրանք պարզորոշ վկայում են, որ առաջադրված նպատակը տվյալ տարիքին անհամապատասխանության կամ ուսումնառության այլ պայմանների արդյունքում իրատեսական չէ, ուրեմն պետք է վերանայել նպատակը:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման տեմպը, ուսուցման ժամանա-

կակից մեթոդները, սովորողների անընդհատ ինքնակրթության և զարգացման անհրաժեշտությունը պարտադրում են ուսուցման գործընթացում կիրառել այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք բարձրացնում են կրթության արդյունավետությունը և որակը, ապահովում են ինքնուրույն ճանաչողական գործունեության շարժառիթներ, նպաստում են միջառարկայական կապերի ամրապնդմանը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և առարկայական ծրագրերի ինտեգրման եղանակով: Այս պահանջները բավարարում է ինտերակտիվ մեթոդների կիրառումը:

Ինտերակտիվ դասը փոխգործակցություն է ոչ միայն դասավանդողի և սովորողի, այլև հենց իրենց՝ սովորողների միջև, ուսումնական նյութի և սովորողների միջև: Ավանդականների հետ համեմատած, ուսուցման ինտերակտիվ մոդելներում փոխվում է նաև փոխգործակցությունն ուսուցչի հետ. նրա ակտիվությունն իր տեղն է զիջում սովորողների ակտիվությանը, ուսուցչի խնդիրն է ստեղծել պայմաններ նրանց նախաձեռնության համար:

Ինտերակտիվ տեխնոլոգիաներում սովորողները հանդես են գալիս որպես լիիրավ մասնակիցներ, նրանց փորձը պակաս կարևոր չէ ուսուցչի փորձից: Վերջինս ոչ այնքան տալիս է պատրաստի գիտելիքներ, որքան խթանում է սովորողների ինքնուրույն որոնումը: Ինտերակտիվ տեխնոլոգիաներում ուսուցիչը հանդես է գալիս մի քանի հիմնական դերերով: Նրանցից յուրաքանչյուրում նա կազմակերպում է մասնակիցների փոխգործողությունը տեղեկատվական միջավայրի այս կամ այն հատվածի հետ: Իրազեկիչ-փորձագետի դերում ուսուցիչը շարադրում է տեքստային նյութը, ցուցադրում տեսաշարքը, պատասխանում մասնակից- ների հարցերին, հետևում է գործընթացի արդյունքներին և այլն:

Վերջին տարիներին տարրական դասարանների ուսուցիչների առջև բացվում է գործունեության լայն դաշտ՝ ստեղծագործել, փորձարարել և որոնել ուսուցման իդեալական տարբերակ: Այսօր տարրական կրթությունը ձևավորում է երեխաների կրթական գործունեությունը, պահպանում է կրթական համակարգը և ճանաչողական դրդապատճառները, իրականացնում է կրթական նպատակները, վերահսկում և գնահատում է ուսումնական նպատակներն ու նրանց արդյունքները:

Կրտսեր դպրոցականն ունի տարիքային առանձնահատկություններ. անկայուն ուշադրություն, տեսողական-պատկերավոր մտածողության գերակշռում, բարձր շարժողական ակտիվություն, ձգտում խաղային գործունեության, ճանաչողական

հետաքրքրությունների բազմազանություն:

Դասի ընթացքում երեխաների ուշադրությունը պահելու համար անհրաժեշտ է ակտիվ և հետաքրքիր դասաժամի կազմակերպում: Մեր դիտարկումների ընթացքում հանգել ենք այն եզրակացության, որ առանց շարժառիթի կամ թույլ շարժառիթով գործունեությունը ցանկացած ձևերի և մեթոդների կիրառման դեպքում կա՛մ ընդհանրապես չի իրականացվում, կա՛մ ծայրաստիճան անկայուն է լինում:

Թե աշակերտն իրեն ինչպես է զգում որոշակի իրավիճակում, կախված է այն ջանքերի ծավալից, որոնք նա գործադրում է իր ուսման ժամանակ: Այդ պատճառով կարևոր է, որ ուսուցման ամբողջ գործընթացը երեխայի մոտ առաջացնի ինտենսիվ և ներքին դրդում՝ լարված մտավոր աշխատանքի համար: Մեր պրակտիկայի ընթացքում պարզեցինք, որ դպրոցականի զարգացումն ավելի ինտենսիվ և արդյունավետ է տեղի ունենում, եթե նա ներառված է գործունեության մեջ, որը համապատասխանում է նրա տարիքային առանձնահատկություններին: Եթե դրական հույզեր է առաջացնում ուսուցումը, իսկ կրթական գործընթացի մասնակիցների մանկավարժական ներգործությունը հիմնված է վստահության վրա, ապա ուժեղացնում է հույզերի և ըմբռնման դերը:[4]

Ուսումնական կայուն շարժառիթի (մոտիվացիայի) և ճանաչողական ակտիվության զարգացման նպատակով կիրառվում են աշակերտների գործունեության բազմազան մեթոդներ՝ խրախուսում, հաջողության իրավիճակների ստեղծում, պրոբլեմային իրավիճակների ստեղծում, ստեղծագործական առաջադրանքների կատարում, պատասխանատվության ձևավորում, օգտակար լինելու ցանկության ձևավորում, փոխօգնության իրավիճակների ստեղծում, կոլեկտիվ աշխատանքի արդյունքների նկատմամբ հետաքրքրություն, ինքնաստուգման և փոխստուգման կազմակերպում, դրդում այլընտրանքային լուծումների որոնման:

[4] Ասատրյան Լ., Հակոբյան Գ., Ասատրյան Մ., Գևորգյան Մ., Կարապետյան Ն. Արմինե Բաղդասարյան, Մանկավարժություն, Ե,, 2017:

1.1 Փոխգործուն մեթոդների կիրառումը մայրենիի դասերին

Ուսուցման փոխներգործուն մեթոդները, ինչպես արդեն նկատեցինք, խթանում են կրտսեր դպրոցականների ճանաչողական ակտիվությունը, նպաստում երկխոսական համագործակցային կարողությունների ձևավորմանը: Փոխներգործուն մեթոդները ապահովում են ուսուցման գործընթացի մասնակիցների փոխադարձ ակտիվության բարձր մակարդակը, որը ներառում է փոխազդեցության գործնական ուղղվածությունը: Ուսուցման փոխներգործուն մեթոդները հնարավորություն են տալիս զարգացնելու կազմակերպական հմտությունները, ձեռք բերելու փորձառություն:

Դասերի ժամանակ ուսուցման փոխներգործուն մեթոդների կիրառումը ձևավորում է նաև դիմացինին լսելու, նրա կարծիքը հաշվի առնելու, համագործակցելու, հանդուրժողական և բարյացակամ վերաբերմունք ընդդիմախոսի նկատմամբ:

Տարրական դասարաններում փոխներգործուն մեթոդների կիրառումն ապահովում է ուսուցման և ուսումնառության աշակերտակենտրոն ձև, համաձայն որի՝ յուրաքանչյուր սովորող պետք է դառնա դասի մասնակիցը՝ ինքնուրույն անցնելով գիտելիքների ձեռքբերման ճանապարհը: «Ժամանակակից դպրոցը աշակերտակենտրոն ուսուցման գործընթացում հենվում է ուսուցման փոխներգործուն մեթոդների վրա և դիտարկում այդ ձևերը՝ որպես դպրոցականների անձի զարգացման միջոցներ:

Այս մեթոդների կիրառման ժամանակ առաջնային դառնում է ուսուցողական երկխոսությունը, որովհետև այն անմիջականորեն ազդում է կրտսեր դպրոցականի անձի զարգացման, նրա բարոյական, մտավոր և հոգեկան որակների ձևավորման և զարգացման վրա»:[5]

1.2 Գործնական մաս<<Մութի և լույսի ծնունդը>> թեմայի օրվա պլան 2 օր)

Մեր հետազոտական աշխատանքի ընթացքում մենք ուսումնասիրեցինք 3-րդ դասարանի մայրենիի դասագրքերի լայն և նեղ թեմաները: Ժամանակակից մի շարք փոխգործուն մեթոդների ու մեթոդական հնարների միջոցով դասագործընթացի տարբեր փուլերում փորձեցինք վեր հանել ստեղծագործությունների գաղափարական բովանդակությունը, բացահայտել ենթատեքստերը և վերլուծել:

[5]Թորոսյան Կ., ՉիբուխչյանԿ., Գործնական աշխատանքներ մայրենիից, Ե., 2012:

ՆԱԽԱԳԻԾ

Մինչև օրվա պլան գրելը փորձել ենք ուսումնասիրել նյութի բովանդակային արժեհամակարգը: Եկել ենք այն համոզման,որ այս բնագրի միջոցով հնարավոր է իրականացնել նշված նպատակներ:

ա) Օրենսդրություն (իրավունք և պարտականություն), կապել <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի համանուն թեմայի հետ (տղան իրավունք ունի շրջել աշխարհում):

բ) Ժողովրդավարություն հարգանք,պատասխանատվություն,դրական վերաբերմունք այլ երկրների ժողովուրդների հանդեպ (գնալ,տեսնել,շփվել,սովորել) առաջավորը:

գ) Մշակույթ՝ գնահատել առաջադեմը գեղեցիկը տղան մեծ ու գեղեցիկ շատ տներ տեսավ:

դ) Հոգեբանական (տղայի գոգեվիճակը)

ե)խնդրահարույց (տղան չի ուզում ապրել գորշ խրճիթում):

զ)Խնդրի հանգուցալուծում սովորելով ուրիշներից, աշխատելով ստեղծիր քեզ համար հարմարավետ պայմաններ:

ՄԱՅՐԵՆԻ ԴԱՍ (3-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ) / 2 ժամ /

Դասի թեման՝ <<Մութի և լույսի ծնունդը>> :Օժանդակ բայի իմացության ամրապնդում:

Դասի տեսակը՝ Նոր նյութի հաղորդում

Դասի նպատակները՝ 1. Զարգացնել հաղորդակցական, համագործակցայինն վերլուծական կարողությունները, բանավոր և գրավոր կապակցված խոսքը:

2.Ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները:

3.Կարողանա ճիշտ գործածել օժանդակ բայը:

Վերջնարդյունքը՝ 1.Կարողանա արտահայտի սեփական տեսակետը, խոսի իր զգացումների մասին՝ մտքերն արտահայտելով պարզ և հասկանալի ձևով, պահպանի հայերենի ուղղախոսական կանոնները:

2.Կարողանահամեմատի նհակադրի մութն ու լույսը:

3.Կարողանա համագործակցի ընկերների հետ, հարգանքով վերաբերվի նրանց:

Անհրաժեշտ պարագաներ՝ պաստառ, նկարներ, կպչուն թերթիկներ, գիրք:

Դասի ընթացքը ԽԻԿ համակարգով

Կազմակերպչական մաս՝ հաճախումների հաշվառում, տնային աշխատանքի ստուգում

Դասի ընթացքում կիրառվող մեթոդներ՝ բանավոր հարց ու պատասխան, մտագրոհ, ԳՈՒՍ, Քառաբաժանի մեթոդ, աքրոստիկոսի հորինում, <<Մտածի՛ր , զու՛յգ կազմիր, մտքեր փոխանակիր>> մեթոդ:

Խթանում՝ գրավիչ մուտք

Դասը սկսվում է մի երևակայական պատմությամբ.

-Գիտնականները հայտնաբերել են երկու արտասովոր մոլորակ: ԵՎ գիտե՞ք ին – չով են արտասովոր այդ մոլորակները: Մոլորակներից մեկում ընդհանրապես լույս չկա, այնտեղ միշտ գիշեր է, իսկ մյուսում մշտական լույս է, երբեք մութ չի լինում:

Այժմ եկեք բաժանվենք երկու խմբի և մտովի թռչենք այդ մոլորակներ: Ի՞նչ եք կարծում, որտե՞ղ ձեզ ավելի լավ կզգաք և ինչու՞: /Դասարանը բաժանել խմբերի/:

Խմբի յուր. աշակերտ ինքնուրույն մտածելուց հետո կհայտնի կարծիք: Այնուհետև իրենց կարծիքները կընդհանրացնեն խմբով:

Իմաստի ընկալում

Դիտել <<Գտնված երազը >> մուլտֆիլմը:

Այնուհետև ուսուցիչը կընթերցի բնագիրը: Դրան կհաջորդի աշակերտների լուռ ընթերցանությունը:

ԳՈՒՍ աղյուսակի միջոցով հասկանալի կդառնա,թե ինչ գիտեն աշակերտները, ինչ սովորեցին և ինչ են ցանկանում իմանալ:

Գիտեմ	Ուզում եմ իմանալ	Սովորեցի

Նախօրոքք կտրտված նկարները կարողանան տեղադրել համապատասխան <<Լույս>> և <<Մութ>> պաստառներին: Կպչուն թերթիկների վրա կարողանան կատարել նաև բնորոշ մեկնաբանություններ:

Կշռադատում

Քառաբաժանի մեթոդ /խմբային 4 խումբ/

Առաջին խումբ	Երկրորդ խումբ
Ինչ հասկացա	Ի՞նչ զգացի
Երրորդ խումբ	**Չորրորդ խումբ**
Ինչ կցանկանայի	Ինչ կանեմ, երբ մեծանամ

Գնահատում

Տնային աշխատանքի հանձնարարում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր դիտարկումների ընթացքում հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

1. Ուսուցման մեթոդներն ուսուցչի և աշակերտների փոխգործակցության,ուսուցչի կողմից սովորողների ուսումնաճանաչողական գործունեության կազմակերպման եղանակներ են, որոնք ուղղված են անձի կրթության ու դաստիարակության իրականացմանը:

2. Կրթության բովանդակության արդիականացումը հնարավոր է իրականացնել ուսուցման փոխներգործուն մեթոդների կիրառմամբ, որի հիմքում սովորողի և կրթական միջավայրի փոխազդեցությունն է, գիտելիքների ձեռքբերման գործընթացը: Ուսուցման փոխներգործուն մեթոդները խթանում են կրտսեր դպրոցականների ճանաչողական ակտիվությունը, նպաստում համագործակցային կարողությունների ձևավորմանը:

3.Տարրական դպրոցի ուսուցման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով դասավանդման գործընթացում հաճախակի են կիրառվում ուսուցման փոխներգործուն մեթոդներ: Այն հնարավորություն է տալիս ուսումնական նյութը մատչելի, հետաքրքիր և պատկերավոր ձևով հաղորդել աշակերտներին, որը և նպաստում է գիտելիքների ավելի կայուն, արդյունավետ յուրացմանը:

4. Փոխներգործուն մեթոդների կիրառման արդյունավետության վերաբերյալ ուսուցիչների և աշակերտների շրջանում իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծությունը բացահայտում է.

- փոխներգործուն մեթոդները տարրական դպրոցի ուսուցման գործընթացում հաճախակի կիրառվում են և բավականին արդյունավետ են,
- արդյունավետ են այն ժամանակ, երբ ուսուցիչը դասավանդման գործընթացում զուգակցում է ավանդական և փոխներգործուն մեթոդները,
- աշակերտները սիրում են փոխներգործուն մեթոդներով կազմակերպված դասերը,
- փոխներգործուն մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս աշակերտներին ակտիվորեն համագործակցել միմյանց հետ և լինել դասի ակտիվ մասնակիցը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Ուսումնական ձեռնարկ, Ե., 2005:
2. Ասատրյան Լ., Հակոբյան Գ., Ասատրյան Մ., Գևորգյան Մ., Կարապետյան Ն.Արմինե Բաղդասարյան, Մանկավարժություն, Ե,, 2017:
3. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Եր., 2018, 342 էջ:
4. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն. <<Մայրենի 3>>, մաս 1, Եր., Էդիթ Պրինտ, 2020,
5. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն. <<Մայրենի 4>>, մաս 1, Եր., Էդիթ Պրինտ, 2019,
6. Թորոսյան Կ., ՉիբուխչյանԿ., Գործնական աշխատանքներ մայրենիից, Ե., 2012:
7. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., Մայրենի 3, Ե., 2018:
8. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Չիբուխչյան Կ., Մայրենի 4, Ե.,2015:

ՀԱՎԵԼՎԱԾ

1ц=1000մմ
1կգ=1000գ
1կմ=10000գմ